**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**«ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ախ-33» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Նիստի անցկացման՝

ՀՀ ներքին գործերի նախարարություն (ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում,), 403 սենյակ ,

-օրը՝ 20.05.2026թ.-ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Ռ. Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ Կ. Սուքիասյան, Ա. Սուքիասյան

Հանձնաժողովի քարտուղար Ա. Խաչատրյան

**1. Տվյալներ անհամապատասխանությունները շտկելու մասին**

------------------------------------------------------------

/Ռ. Մկրտչյան/

**1.1** Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ախ-33» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի 15.05.2026 թվականին համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկվել մասնակից Muton LLC-ին՝ տրամադրելով մեկ աշխատանքային օր շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

**1.2** Մասնակից Muton LLC-ի կողմից շտկման ենթակա փաստաթղթերը չեն ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի **42-րդ կետով** և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի **6-րդ հոդվածի 6-րդ կետի բ ենթակետի** պահանջները, **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ախ-33** ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից **Muton LLC-ի 1-8-րդ** չափաբաժինների մասով ներկայացված հայտը ենթակա է մերժման և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում է անբավարար:

Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ - 0:*

**2. «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ախ-33» ծածկագրով գնման ընթացակարգի որոշ չափաբաժիններ չկայացած հայտարարելու մասին**

------------------------------------------------------------

/Ռ. Մկրտչյան/

**2.1** **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ախ-33** ծածկագրով գնման ընթացակարգը **1-8-րդ** չափաբաժիններով համարվում է չկայացած, քանի որ վերոգրյալ չափաբաժիններով հայտ ներկայացրած մասնակցի փաստաթղթերը ենթակա են մերժման՝ ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գնման ընթացակարգը վերոգրյալ չափաբաժնով հայտարարում է չկայացած:

**2.2** Հաստատել ընթացակարգի 1-8-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ - 0*

**Հանձնաժողովի նախագահ՝**

ՏՏ և ԿՎ պետի տեղակալ Ռ. Մկրտչյան

**Հանձնաժողովի անդամներ՝**

| | | |
|---|---|---|
| ՀՔԾՄԹԼՎ գլխավոր մասնագետ | | Կ. Սուքիասյան |
| ՀՔԾՄԹԼՎ գլխավոր մասնագետ | | Ա. Սուքիասյան |

**Հանձնաժողովի քարտուղար՝**

| | | |
|---|---|---|
| ՏՎ ԳՀ բաժնի ավագ մասնագետ | | Ա. Խաչատրյան |